14688

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«03» 11 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0197-23

Ձեռնարկողը՝ ***«ՅՈՒՆԻՓՈՒԼ» ՍՊԸ***
ք. Երևան, Քոչարյան 6, բն.7

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղի 21/5 հասցեում հասարակական նշանակության շինության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ՀՀ, ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0197-23

«03» Հոկտեմբերի 2023թ.

Երևան քաղաքի, Թբիլիսյան խճուղի 21/5 հասցեում հասարակական նշանակության շինության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ՅՈՒՆԻՓՈՒԼ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք.Երևան, Արաբկիր վարչական շրջան

Ներածական մաս. «ՅՈՒՆԻՓՈՒԼ» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղի 21/5 հասցեում կառուցել հասարակական նշանակության շինություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա.» ենթակետի համաձայն՝ ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նախատեսվող գործունեության անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը՝ №08122021-01-0367, /ծածկագիրը՝ 01-003-0404-0164/, Երևանի քաղաքապետարանի կողմից 03.08.2022թ. տրված №01/18-07/1-Դ-27494-686 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ խառը կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից հասարակական նշանակության շինություն՝ 1 ստորգետնյա և 3 վերգետնյա հարկերով, գրասենյակային և պահեստային տարածքներ: Նախագծվող շենքը գտնվում է Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղի 21/5 հասցեում: Հողատարածքը գտնվում է հասարակական շենքերի, ազատ տարածքների, շինությունների և ճանապարհի հարևանությամբ:

Հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 2660.46 մ²:
Կանաչապատման մակերես՝ 534.7 մ² / 20.1 %:
Նկուղային հարկի կառուցապատման մակերեսը՝ -2.85 նիշում 1553.5 մ²:
Առաջին հարկի կառուցապատման մակերեսը՝ +0.90 նիշում 1601.0 մ² / 60.17 % :
Երկրորդ հարկի կառուցապատման մակերեսը՝ +5.70 նիշում 744.7 մ² :
Երրորդ հարկի կառուցապատման մակերեսը՝ +9.30 նիշում 740.3 մ²:
Անջրանցիկ հատվածի մակերեսը՝ 524.76մ² / 19.73 %:

Հասարակական նշանակության շինության տարածքն ունի թեք ռելիեֆ, արևարեկաց է, առկա է բազմամյա խոտի տեսքով աճած խառը բուսականություն: Հասարակական նշանակության շինության կառուցումը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում՝ երկաթ-

բետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 2.600մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող հողային զանգվածի մի մասը՝ 1.150մ³, կարճաժամկետ պահվելու շինարարական հրապարակում և օգտագործվելու է որպես հետլիցք: Մնացած հանույթն օգտագործվելու է տարածքի հարթեցման նպատակով և ավելցուկային գրունտ չի առաջանալու:

Համաձայն հայտի՝ տարածքում բնության հատուկ պահպանվող կամ պատմամշակույթային հուշարձաններ չկան: Նախնական ուսումնասիրությունների և գրականական տվյալների նույնականացման արդյունքում պարզվել է, որ բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չկան: Օբյեկտի ընդհանուր շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 2 տարի:

Հաշվի առնելով շինարարական անվտանգության պահանջները և կառույցի տեխնոլոգիական առանձնահատկությունները՝ կառուցման աշխատանքները նախատեսվում է կատարել երկու փուլով: Առաջին փուլում նախատեսվում է կատարել գոյություն ունեցող քանդման ենթակա շինությունների կոնստրուկցիաների և հիմքերի ամբողջական ապամոնտաժման, , իսկ երկրորդ փուլում՝ շինության կառուցման աշխատանքները: Շինարարական հրապարակը, ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը կազմակերպվելու են բացառապես համալիրի վարչական տարածքի սահմաններում: Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող 125 մ³ հողի բերրի շերտը կուտակվելու է տարածքում՝ պահպանելու նպատակով՝ Կառավարության 2017թ նոյեմբերի 2-ի №1404 որոշման համաձայն: Հողածածկին պատճառված վնասները նվազագույնին հասցնելու նպատակով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները.

-շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում գտագործվելու է տեղանքի կանաչապատման համար,

-ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի,

-ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվելու են խոտաբույսերով կամ իրականացվելու են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն: Բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:

Հասարակական նշանակության շինության ջրամատակարարումն ու ջրահեռացումը իրականացվելու են համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումը կիրականացվի Թբիլիսյան խճուղով անցնող D=600մմ ջրագծից, ջրահեռացումը՝ Թբիլիսյան խճուղով անցնող D=800մմ կոյուղատարով, հեղեղատարը՝ Թբիլիսյան խճուղով անցնող D=500մմ կոյուղագծով՝ համաձայն տեխնիկական պայմանի:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման համար՝ 382 մ³/շին. ժամ, աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը կկազմի 4490 մ³/շին. ժամ:

Աշխատանքների ավարտից հետո մաքրվելու են բոլոր տարածքները և առաջացած թափոնները տեղափոխվելու են ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Կանաչապատման համար նախատեսված 534,7 մ² տարածքում իրականացվելու են կանաչապատման աշխատանքներ՝ սիզամարգի ցանքսի տեսքով, և ծառատունկ: Կանաչապատման համար օգտագործվելու են թույա /7տնկի/, գնդաձև ակացիա /9 տնկի/ և այլ ծառատեսակներ, ինչպես նաև ծաղկասածիլներ և խոտի սերմ:

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել Կառավարության 2018թ ապրիլի 12-ի N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման

համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում: Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտհանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են ջերմության բարձր խնայողություն, իսկ գրասենյակային և պահեստային տարածքներում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրվելու են հարկերի առաստաղների տակ: Ավտոհանգրվաններում նախագծված են մեխանիկական դրդմամբ արտածման և ներածման օդափոխության համակարգեր: Յուրաքանչյուր մեքենայի համար արտածվող օդաքանակը հաշվարկված է ըստ նրա հզորության: Օդի արտածումը կատարվում է վերին և ներքին գոտիներից հավասարարաչափ: Ավտոհանգրվանից և նկուղային հարկի պահեստներից իրականացվելու է ծխահեռացում: Հրդեհի ժամանակ ավտոկայանատեղիի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր:

Նախատեսվող գործունեության արդյունքում օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են հետևյալ աշխատանքները.

-շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան, պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,

-շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով,

-սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

-ջրցանի ծավալները հաշվարկվելու են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն պարզարան, որը գտնվում է յուրաքանչյուր շինարարական հրապարակին կից և իրենից ներկայացնում է պլաստմասե 25մ^3 ծավալով տարողություն: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինարարական աղբ:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում է շինարարական նյութերը տեղադրել բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական գործընթացներում ներգրավել ժամանակակից տեխնիկակական միջոցներ, իսկ տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով ապահովել սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

-Մթնոլորտային օդ արտանետումների (փոշի, CO, NOx) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

-Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ:

-Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

-Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

-Շինարարության ընթացքում հատված 5 ծառերի փոխարեն կտնկվեն 16 ծառեր: Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:
Ամբողջ շինարարության ընթացքում բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է 4.000.000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրի վարչական շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության,ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
2. Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը՝ համաձայնեցնելով Երևանի քաղաքապետարանի հետ:
3. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
   -շինհրապարակի տարածքում անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
   -շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
   -շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
   -բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
5. Մինչև նախատեսվող գործունեության իրականացումն անհրաժեշտ է ստանալ բնակելի համալիրի գազամատակարարման և էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանները:
6. Նախագծի վերջնական տարբերակում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

7. Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» որոշման՝ աշխատանքների կատարման ժամանակ ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
8. Նախագծի վերջնական տարբերակում հաշվի առնել Կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N426-Ն՝ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշման պահանջները:
9. Հասարակական շենքի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՅՈՒՆԻՓՈՒԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղի 21/5 հասցեում հասարակական նշանակության շինության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Աննա Սարգսյան